ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

25.03.2026 թ. N 02/16.4/4917-2026

«ՍՈՒՐԳԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
տիկին Մարիաննա ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ surgev.llc@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի տիկին Սանթրոսյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍՈՒՐԳԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի փետրվարի 3-ին կնքվել է «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/34 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներ, որոնց իսկության ստուգման նպատակով Պատվիրատուն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Բանկ) պարզել է, որ Պատվիրատուին ներկայացրած երաշխիքների մի մասն է թողարկվել Բանկի կողմից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 8-րդ, 12-րդ ենթակետերի և Պայմանագրի 7.3 կետի պահանջները՝ Պատվիրատուն Ընկերության հետ կնքած Պայմանագիրը 2026 թվականի մարտի 25-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումը 2026 թվականի մարտի 25-ին

կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Հարգանքով՝
պարտականությունները կատարող

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2026-03-25 09:33:10 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722